

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Հարուստ
մարդ,
աղքատ
մարդ



Written by: Edward Hughes

Illustrated by: Alastair Paterson; M. Maillot; Lazarus

Adapted by: M. Maillot; Sarah S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children
www.M1914.org

©2020 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Յիսուս գիտեր, թէ
տաճարին առաջնորդներէն
շատեր դրամը Աստուծոյ
աւելի կը սիրէին:



Ան պատմեց, թէ ինչ եղաւ երկու
մարդոց, եւ ինչո՞ւ անիմաստ է
հարստութիւններ ունենալ
առանց Աստուծոյ:



Հարստութիւնները չեն
կրնար կեանք գնել
առանց Աստուծոյ
երկինքին
մէջ:



Հարուստ
մարդ մը կար,
որ գեղեցիկ
հագուստներ
ուներ, որոնք
շատ սուղ
էին: Ան
թագաւորի
պէս կը
հագուէր:




Հարուստ մարդը նաեւ շատ լավ
կ'ուտէր: Ամէն ճաշ կարծես
խրախճանք էր:



Այնքան դրամ ունէր,
որ ցանկացածը կրնար
գնել ուտելու, իբր
Նախաճաշ, ճաշ
եւ ընթրիք կամ
անոնց
միջեւ:




Հարուստ մարդուն փողոցի դրան
առջեւ աղքատ, հիւանդ
սոված մուրացկան



մը կը նստէր:



Անոր անունը Ղազարոս էր:



Խեղճ Ղազարոսի
մարմինը վերքերով
լեցուն էր: Ան
հիլանդուլթիւն
ունէր:



Ան վերքեր եւ
սպիւնեղու ուռեցքներ
ունէր, որ ստացած
էր չար մարդոցմէ:



Կրնար հիւանդ ըլլալ,
որովհետեւ լաւ ճաշ,
կաթ, բանջարեղէն եւ
միս չունէր սնանելու:



Ղազարոս ճաշ
կ'աղաչէր:
Ան ուրախ
կ'ըլլար
նոյնիսկ եթէ
մնացորդը
ուտէր այդ
հարուստ
մարդուն
ճաշին:



Փողոցին
շուները
երբեմն կը
լիզեն
անոր
վերքերը,
այդ խեղճ
յանձնուած
մուրացկանին:



Կարծես
մեկու
մը հոգը
չէր, որ
Ղազարոսը
սովի մէջ
էր:



Առաւօտ մը
Ղազարոս
է'արթնցաւ:



Այս խեղճ
սոված եւ
անընկեր
մուրացկանը
լքեց այս
կեանքը:
Ղազարոս
մեռած էր:




Ղազարոսի համար
ուրախութիւն էր այդ
վայրկեանը, որ ան մեռաւ:



Յիսուս ըսաւ, որ
հրեշտակները զինք
գրկեցին, որպէսզի ըլլայ Աբրահամի
հետ: Ղազարոս Աստուծոյ
հանգիստ գտաւ:



Հարուստ մարդն ալ մեռաւ: Ամբողջ
իր դրամը չէր
կրցած իր կեանքը
փրկել, ...



... երբ մահը եկաւ որեւէ մէկը
չկրցաւ կեցնել
զայն:



Հարուստ մարդը թաղուեցաւ:
Թերեւս մեծ թաղումով:



Թերեւս մարդիկ կը գոպեն հարուստ
մարդուն, որ խոհեմ եւ յաջող էր:



Սակայն անոնց գովասանքները
չօգնեցին անոր, հարուստ
մարդը, դժոխքի մեջ էր:



Դժոխքին մեջ հարուստ
մարդը կը պռռար.



"Յայր Աբրահամ, Ղազարոսը դրկե,
որպեսզի իր մատը դպցնէ ջուրին եւ
քիչ մը պաղեցնէ լեզուս, ...



... որովհետեւ շատ կը չարչարուիմ
այս բոցերուն մէջ”:




"Կեանքի մէջ
ունեիր ամեն ինչ եւ
Ղազարոսը ոչինչ".
Աբրահամը յիշեցուց
հարուստ մարդուն:
"Յիմա Ղազարոսը
հանգիստ պիտի ընէ
եւ դուն
տառապիս:"




Որեւէ մէկը չի
կրնար դիմացի
հակառակ հսկայ
ծոցը կտրել, որ
մեր եւ քու մէջ է”:




"Ղազարոսը դրկէ, որ
զգուշացնէ իմ հինգ
եղբայրներուս
աղաչեց
հարուստ
մարդը:




Չեմ ուզեր, որ ինձի
պես հոս տառապին
եւ սարսափելի վերջ
ունենան”:




"Քու եղբայրների ունին
Աստուծոյ խօսքը", ըսաւ
Աբրահամ, ...



... "Եթէ հինգ եղբայրներդ
չեն հաւատար Սուրբ
գործին, ...



... ապա չեն հաւատար
երթ նոյնիսկ Ղազարոս
ես գայ
մեռելներէն”:



Երբ Յիսուս վերջացուց
պատմութիւնը այս հարուստ
մարդուն եւ Ղազարոսին,
թերեւս տաճարին
առաջնորդները իրենք
իրենց հարց
տուին.



"Արդեօ՞ք ես կը
սիրեմ երկրաւոր
հարստութիւնները
աւելի քան
զԱստուծ":



Յիմա անոնք գիտէին, թէ ինչ
կը պատահի անոր եղեր
Աստուծոյ խօսքէն
կը շեղի:



Հարուստ մարդ, աղքատ մարդ:

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 16

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն
օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

